# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՒ Ս. ՀԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ՈՂՋՈՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ԵՐՈՒՍԱՂԵՄ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ՍՏԱՄԲՈՒԼ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԲԵՅՐՈՒԹ.
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ:

Փրկչի Իջման Ս. Տաճարեն Ձեզի կբերենք ավետիսը Քրիստոսի հրաշափառ հարության, որ «մահուամբ զմահ կոխեաց» և «մեզ զկեանս պարգևեաց»:

Մենք կհավատանք, թե իրավ հարյավ Քրիստոս, և մեզի բոլորիս շնորհեց կենարար հույսը հավիտենական կյանքի:

Ի սփյուռս աշխարհի ցրված հայ բարեպաշտ հոգիներու համար այդ հույսը վառ է ու պայծառ մանավանդ Լուսավորչի անմար կանթեղով, որ բազում դարերե ի վեր իր լույսը և իր շնորհները կսփռե Ս. Էջմիածնեն՝ Հայաստանյայց Եկեղեցիին և համայն հայ հավատացյալ ժողովուրդին վրա:

«ՓԱ՜ՌՔ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՈ, ՏԷՐ»:

Փա՜ռք նաև Քեզ՝ հույսի ճրագ, լույսի աղբյուր՝ Ս. Էջմիածին:

Հարության ավետիսով կշնորհավորենք Ձեր Ս. Զատիկը և կմաղթենք Ձերդ Սրբազնության և բեմիդ հոգևոր դասուն, թեմական ու թաղական խորհուրդներու անդամներուն, Եկեղեցվո երիտասարդաց, տիկնանց և օրիորդաց միություններուն, դպրաց դասերուն, Ձեր վարժարաններուն, ազգային-մշակութային և բարեսիրական կազմակերպություններուն և համայն Մեր սիրեցյալ աստվածասեր ժողովուրդին՝ արևշատ երջանիկ խաղաղ տարիներ, եկեղեցաշեն ու ժողովրդանվեր բեղուն գործունեությամբ:

Կմնանք նաև ջերմապես աղոթող համայն աշխարհի խաղաղության և ժողովուրդներու եղբայրության ամրապնդման համար:

«ՇՆՈՐՀՔ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՓՐԿՉԻՆ ՄԵՐՈՅ» «ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՍՏԱՏԵՍՑԻ Ի ՍԻՐՏՍ ՁԵՐ, ՅՈՐ ԵՒ ԿՈՉԵՑԱՐՈՒՔՆ ՄԻՈՎ ՄԱՐՄՆՈՎ» (Կողոս. Գ 15):

ՎԱԶԳԷՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբի նախագահ պր. Եռվանդ Աղաթանյանին (Նյու-Յորք), Արարատյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովին (Բեյրութ), Վարդանանց ասպետների կազմակերպության (Նյու-Յորք), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց կազմակերպություններին, Մայր Աթոռի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

## ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ս. Զատկի բախտավոր առիթով մեր և մեր միաբանության կողմե Ձերդ Սրբության կներկայացնենք մեր ամենաանկեղծ և հարգալից շնորհավորանքները. մաղթելով Ձերդ Սրբության հարատև առողջություն, երջանկություն և Մայր Աթոռին բարգավաճում:

**ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ**

ԵՐՈՒՍԱՂԵՄ

---

Մեր անունով եկեղեցական դասուն, համայնքային մարմիններու և ամբողջ ծավալատացյալ հոտին կողմե կշնորհավորենք Ս. Զատիկը, մաղթելով Վեհիդ երկար տարիներ և արդյունաշատ հովվապետություն:

**ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ**

ԻՍՏԱՄԲՈՒԼ

---

Մեր և մեր համայնքին անունով ջերմապես կշնորհավորենք Ս. Զատիկը, մաղթելով քաջառողջ կյանք և Մայր Աթոռին բարգավաճում:

**ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**

ԲԵՅՐՈՒԹ

---

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև հարգալից զգացմունքներով և ամենաջերմ սրտով գրված բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին բոլոր թեմերից, թեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, նաև օտար պաշտոնական անձնավորություններից: